



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԱԿՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



Եկեղեցւոյ 107րդ Տարեդարձին Առիթոյ

**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ Ս. ՊԱՏԱՐԱԳ ՄԱՏՈՅՑ ԵՒ
 ԴՊԻՐՆԵՐՈՒ ԶԵՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԿԱՏԱՐԵՑ
 Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՅՈՅ ՄԷՁ**

Կիրակի 27 Յունուար, 2008ին տեղի ունեցաւ Ֆրեզլոյի Ս. Երրորդութիւն Հայց. Առաքելական Մայր Եկեղեցւոյ հիմնադրութեան 107րդ տարեդարձը, հովանաւորութեամբ Թեմիս Բարեջան Առաջնորդ՝ Գերշ. Տ. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեանի:

Առաւօտեան, Ս. Եւ Ամմահ Պատարագը մատոյց եւ իր հայրական պատգամը տուաւ Առաջնորդ Սրբազան Հայրը. նախ քան իր քարոզը, Սրբազան Հայրը կատարեց ձեռնադրութիւնը 6 դպիրներու՝ Միհաս Արիսեանի, Պրէնտըն եւ Պրէնթ Համբարձումեաններու, Նշան Պաղտասարեանի, Թայլըր Շըկրեանի եւ Կարէն Ծնունդեանի, նաեւ Արմէն Պետրոսեանի ուրարի տուչութիւնը: Իր պատգամին սկիզբը, Սրբազան Հայրը շնորհաւորեց եկեղեցւոյ անդամները 107րդ տարեդարձին առիթով, գնահատելով հիմնադիրները եւ անոնց յաջորդող սերունդները, որոնք ոչ մէկ ջանք խնայեցին եկեղեցին հիմնելու եւ կանգուն պահելու 107 երկար տարիներ: Ապա իր խօսքը ուղղեց եկեղեցւոյս Կիրակնօրեայ դպրոցի աշակերտներուն, որոնք եկած էին ներկայ գտնուելու ձեռնադրութեան արարողութեան եւ լսելու Սրբազան Հօր պատգամը, գոհունակութիւն յայտնեց, որ եկած են իր հայրական պատգամը լսելու, եւ գնահատեց ու քաջալերեց զիրենք եւ իրենց ուսուցիչները, որպէսզի շարունակեն Կիրակնօրեայ վարժարան յաճախել եւ ապա իրենց փոխանցեց Սրբոց Վարդանանց պատգամը, որ յաջորդող Հինգշաբթի օր պիտի տօնախմբուի, եւ խրախուսեց զիրենք հետեւելու Վարդանանց զօրավարաց օրինակին:

Առաջնորդ Սրբազանը իր պատգամին բնաբան ընտրած էր Յովհաննու Աւետարանի Է. գլուխի հետեւեալ համարները, ուր մեր Տէրը կ'ըսէ. «Ով որ ծարաւ է՝ թող ինծի գայ եւ խմէ: Ով որ ինծի կը հաւատայ, անոր սիրտէն կենսատու ջուրի գետեր պիտի բխին»: Ան շէշտեց ըսելով թէ միայն Քրիստոսով կարելի է հոգեկան խաղաղութիւն գտնել եւ մեր կեանքը իմաստաւորել:

Ապա Սրբազան Հայրը անդրադարձաւ Ֆրեզլոյի գաւակներէն, նշանաւոր գրող՝ Ուիլիըմ Սարոյեանի ծննդեան 100րդ եւ եկեղեցւոյ երգչախումբի նախկին ղեկավարներէն՝ Գրիգոր Գալֆայեանի ծննդեան 135րդ տարեդարձներուն, որոնք յիշատակուեցան այդ օր: Պատարագի ընթացքին, ի պատիւ խմբավար Գալֆայեանին, Լոս Անճելըսէս

վաստակաւոր երգչուհի՝ Անահիտ Ներսիսեան եւ եկեղեցւոյս երգչախումբի անդամներէն՝ Յասմիկ Ահարոնեան, Գայիանէ Աճմեան, Նիգոլ Տէր Սիմոնեան, Ֆաթէն Միագնիհ, Լորըն Սարապեան եւ Սառա Սամուրեան-Քամչիեան երգեցին Գալֆայեանի դաշնաւորումներէն շարականներ:

Պատարագի աւարտին, հոգեհանգստեան յատուկ արարողութիւն կատարուեցաւ բոլոր այն ննջեցեալներուն հոգիներուն համար, որոնք անցնող 107 տարիներու ընթացքին ծառայած են Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ, ինչպէս նաեւ Ուիլիըմ Սարոյեանի եւ Փրոֆ. Գալֆայեանի հոգիներուն համար:

Ս. Պատարագի արարողութենէն ետք, եկեղեցւոյ սրահին մէջ, տեղի ունեցաւ պաշտօնական ճաշկերոյթը, որուն աւելի քան 400 հոգի ներկայ էին: Օրուան հանդիսավարը՝ եկեղեցւոյս հոգաբարձութեան ատենապետ Ճէֆ Դանիէլեան, իր բարի գալուստի խօսքէն ետք հրաւիրեց եկեղեցւոյս Զովիւր բացման աղօթքը կատարելու, ապա հրաւիրեց Լորըն Սարապեանը՝ ամերիկեան քայլերգը երգելու, իսկ դպրուհիներէն Անժէլ Օհաննեսեանը առաջնորդելու Զայաստանի քայլերգը:

Ճաշի սպասարկութենէն ետք, Վարուժան Տէր Սիմոնեան ներկայացուց Ուիլիըմ Սարոյեանի մէկ գեղեցիկ գրութիւնը, ուր հեղինակը կը նկարագրէ իր հանդիպումը խմբավար Գալֆայեանի հետ: Ապա երգչուհի Անահիտ Ներսիսեան, դաշնամուրի ընկերակցութեամբ եկեղեցւոյս երգեհոնահարուհի Նայիրա Շահունվարեանի, գեղեցկօրէն ներկայացուց խմբավար Գալֆայեանի «Լաց», «Արաքս» «Նոր Օրօր», «Ալեչաչար» եւ «Կռունկ» գործերը:

Նկատելով որ այս տարի եկեղեցւոյ Զովիւին՝ Արժ. Տ. Վահան Քիւյ. Կոստանեանի Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ ծառայութեան 10ամեակն է, եկեղեցւոյ հոգաբարձութիւնը յատուկ կերպով գնահատեց զինք գեղեցիկ յուշանուէրով մը: Ապա, Մերի Ալիս Գալուստեան Տէր Զօր յանձնեց շնորհաւորական եւ գնահատանքի գիրեր՝ Զալիֆօրնիոյ կառավարիչէն եւ պետական գնազան անձնաւորութիւններէ:

Ըստ ընկալեալ սովորութեան, այս տարի եւս եկեղեցւոյ հոգաբարձութիւնը պատուեց երեք անդամներ՝ Տիկ. Կլետիս Աբգարեանը, Տիկ. Մէյրի Զոգոգեանն ու Տիար Պարեթ Առաքելեանը, եկեղեցւոյ իրենց մատուցած բազմամեայ անսակարկ ծառայութեանց համար:

Տէր եւ Տիկ. Պրայըն եւ Ռոզի Պետրոսեաններ, իրենց զակին՝ Արմէնի Ուրար ստանալուն, ինչպէս նաեւ Տէր Զօր Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ 10ամեայ ծառայութեան ուրախ առիթներով, գեղեցիկ ձեռաց խաչ մը նուիրեցին եկեղեցւոյ:

Առաջնորդ Սրբազան Զայրը իր փակման խօսքին մէջ գնահատեց եկեղեցւոյ Զոգեւոր Զովիւր իր 10ամեայ ծառայութեան եւ շնորհաւորեց զինք իր ձեռնադրութեան 15ամեակին առիթով, մաղթելով իրեն քաջամոռջ կեանք եւ երկար տարիներու ծառայութիւն Զայց. եկեղեցւոյ այս առիթով, Սրբազան Զայրը Տէր Զօր նուիրեց գեղեցիկ լանջախաչ մը: Առաջնորդ Սրբազան Զայրը նաեւ գնահատեց Տիար Ճէք Գահվեճեանը՝ եկեղեցւոյ իր շուրջ 70 տարիներու ծառայութեան համար, պատուելով զինք Ազգ. Առաջնորդարանի յատուկ յուշանուէրով: Ան շնորհաւորեց եկեղեցւոյ

անդամները եւ զանոնք քաջալերեց շարունակելու իրենց ծառայութիւնը Ա. Երրորդութիւն եկեղեցւոյ:

Փակման աղօթքէն ետք «Կիլիկիա» երգով վերջ գտաւ ձեռնարկը:

PRELATE CELEBRATES DIVINE LITURGY AND ORDAINS ACOLYTES ON THE 107TH ANNIVERSARY OF HOLY TRINITY CHURCH IN FRESNO

On Sunday, January 27th, 2008, Holy Trinity Armenian Apostolic Church in Fresno celebrated its 107th anniversary with Divine Liturgy and a banquet held under the auspices of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and hosted by the parish Board of Trustees.

On the morning of Sunday, January 27th, the Prelate celebrated Divine Liturgy during which he ordained six acolytes, Menas Arisian, Nshan Bagdasarian, Brent Hamparzoomian, Brandon Hamparzoomian, Tyler Shegerian, and Garen Zanontian, and one stole bearer, Mr. Armen Bedrosian.

The Prelate began his sermon by congratulating the parish on its 107th anniversary. He then congratulated Rev. Fr. Vahan Gosdanian on his 10th anniversary of faithful service to Holy Trinity Church and 15th anniversary of priesthood. During the sermon, the Prelate acknowledged the Sunday School Students who were in attendance not only to witness the ordination of their peers, but also to hear and acknowledge the message specifically directed to them. He offered words of encouragement and commendation to both the Sunday School Students and the Sunday School Teachers on their commitment to the advancement of the church.

His Eminence then provided an articulate explanation of the upcoming commemoration of St. Vartan to the parishioners and continued his message by presenting the Gospel for this particular Sunday, wherein our Lord Jesus Christ expresses that He is *“the life giving water”* from chapter seven of the Gospel of St. John, explaining that it is only through Christ that we find reason and truth in our lives. His Eminence concluded his message by congratulating the church on its 107th anniversary and by commemorating the William Saroyan Centennial with a tribute to K. Proff Kalfayan on his 135th birthday.

On this occasion, the choir, honoring K. Proff Kalfayan’s memory, sang a number of hymns arranged by K. Proff Kalfayan. Former student of K. Proff Kalfayan, Hasmig Aaronian, performed “Der Voghormya” arranged by Kalfayan. Award-winning soprano, Anahid Nercessyan was invited to perform during the church service. Junior members of the church choir were also featured during the Liturgy. Kayane Ajamian, Nicole Der Simonian, Faten Myaznih, Lauren Sarabian, and Sarah Samourian-Kamciyan served as wonderful additions to a distinguished choir. This monumental occurrence within the church was a magnificent event for the parishioners and guests who were in attendance. It was a remarkable commemoration of Armenian tradition, culture, history and faith.

Following church services, the 107th annual banquet took place in the church banquet hall. An excess of 400 guests took part in the festivities. Jeff Tanielian, Chair of the Board of Trustees, served as the Master of Ceremonies for this event. Mr. Tanielian invited Rev. Fr. Vahan Gosdanian to offer the invocation after which Miss Lauren Sarabian sang a beautiful rendition of the Star-Spangled Banner followed by Ms. Angele Ohannessian who gave an exquisite vocal performance of Armenia's national anthem. Lunch was then served which was prepared by the parish Men's Society.

After lunch, Executive Council member Mr. Varoujan Der Simonian paid tribute to William Saroyan and K. Proff Kalfayan on their respective anniversaries and read from Saroyan's book entitled "*Don't Go, But If You Must, Say Hello To Everybody.*" The reading highlighted Saroyan's words in relation to Kalfayan and incorporated specific issues that directly affected the Armenian community at the time, as well as Saroyan's interaction with Kalfayan.

Mr. Der Simonian then invited soprano Ms. Anahid Necessayan and accomplished organist Ms. Naira Shamsouvarian to perform a musical tribute to K. Proff Kalfayan which incorporated five selections arranged by K. Proff Kalfayan.

Mr. Tanielian then invited Ms. Mary Alice Kaloostian to the podium to present Rev. Fr. Vahan Gosdanian with a myriad of letters of recognition by government officials proclaiming his 10 years of devoted service to Holy Trinity Church and 15 years of priesthood. Ms. Kaloostian highlighted the presentation with the reading of a letter sent by Governor Arnold Schwarzenegger recognizing the achievements of Rev. Fr. Vahan Gosdanian. Ms. Kaloostian then announced that we had also received congratulatory letters from Senators Feinstein and Boxer, Congressmen George Radanovich, Jim Costa, and Devin Nunes, Mayor of Fresno Alan Autry, and the County of Fresno Board Supervisor Henry Perea. Ms. Kaloostian also presented a framed Resolution issued by the California Legislature and signed by Senator Dave Cogdill. Continuing the presentation of awards to Rev. Fr. Vahan Gosdanian, Mr. Tanielian invited Church Administrator Ms. Nazik Arisian to the podium to read a detailed biography of Rev. Fr. Vahan Gosdanian, the contents of which illustrated his family history, academic background, religious milestones, and service to Holy Trinity Church. After reading the biography, Ms. Arisian and Mr. Tanielian amiably presented Rev. Fr. Vahan with an engraved clock on behalf of the Church as a token of appreciation.

Following the presentation of awards, three parishioners, Mrs. Gladys Jamgotchian, Mrs. Mary Hokokian, and Mr. Haig Barret Arakelian were given the prestigious Annual Service Award for their dedication and vast contributions to parish. A biography of each of the award recipients was read and the three parishioners were presented with a beautiful plaque to commemorate this remarkable achievement.

The program continued with Ladies Auxiliary member Ms. Jane Gamoian, Trinity Guild member Ms. Alma Margosian, and Vice Chair of the Board of Trustees Mr. Levon Baladjanian offering their congratulatory remarks to Rev. Fr. Vahan Gosdanian, and on behalf of their respective organizations

graciously presented the proceeds of their extensive fund-raising projects during the past year to the church. Mr. Varoujan Der Simonian followed the presentation by giving his personal message as the liaison to the Executive Council.

The next item on the banquet agenda was the Super Drawing, which was a new fund-raising venue.

Closing remarks were delivered by the Prelate who again congratulated the parish on its 107th anniversary and Rev. Fr. Vahan Gosdanian on his 10-year anniversary as pastor of the church, presenting him with a pectoral cross on this occasion. The Prelate also congratulated the parish for celebrating the achievements of William Saroyan and K. Proff Kalfayan as well as acknowledged the six acolytes on their ordination and Mr. Armen Bedrosian for being elevated to stole bearer. Armen's parents, Mrs. Rosie Bedrosian donated a beautiful hand-crafted cross to the church on this happy occasion.

The Prelate also honored Mr. Jack Gahvejian for his nearly 70 years of service to the church and his diligent and devoted commitment to the church in his capacity as a representative to the Executive Council.

The banquet concluded with the Prelate's benediction and the collective singing of "Giligia".